British Embassy
Yerevan

Հայաստանի
Հանրապետության
Ազգային Ժողով

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն

UKaid
from the British people

Good Governance Fund

Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» շրջանակում՝ բրիտանացի ժողովրդի տրամադրած աջակցությամբ

Խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով կազմակերպություններից և անհատներից մասնագիտական խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու ուղեցույց

«ՀՀ Ազգային Ժողովի՝ քաղաքական բանավեճեր վարելու և ռազմավարական հաղորդակցություն ապահովելու կարողությունների հզորացում» ծրագիր

“Strengthening the capacity of the National Assembly in strategic political debate and communication” project

www.gov.uk/world/armenia
https://www.facebook.com/britishembassyyerevan/
https://twitter.com/UKinArmenia
www.ichd.org

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ազգային ժողովի կողմից օրենքների նախագծերի վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով կազմակերպություններից և անհատներից մասնագիտական խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու վերաբերյալ

Բովանդակություն

1. Ներածություն 2
2. Տրամադրվող մասնագիտական խորհրդատվություն 2
3. Այլընտրանքային խորհրդատվական կարծիքի անհրաժեշտությունը 3
4. Խորհրդատվություն պահանջող հարցերի շրջանակը 3
5. ԱԺ-ին խորհրդատվություն տրամադրողների հնարավոր շրջանակը 6
6. Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ընթացակարգը 7
7. Խորհրդատվական ծառայությունների ֆինանսավորումը 8

1. Ներածություն

ՀՀ Սահմանադրության համաձայն Ազգային ժողովը (այսուհետ՝ ԱԺ) ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, որը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Ուղեցույցի նպատակն է ՀՀ ԱԺ պատգամավորներին, մշտական և ժամանակավոր հանձնաժողովներին, խմբակցություններին և աշխատակազմին օժանդակել ԱԺ կողմից օրենքների, միջազգային պայմանագրերի, ԱԺ եզրակացությունների, որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով կազմակերպություններից և անհատներից մասնագիտական խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու գործընթացում:

2. Տրամադրվող մասնագիտական խորհրդատվություն

ԱԺ աշխատակազմը ձևավորվում է օրենքով սահմանված կարգով և գործում է օրենքների[1] և իր կանոնադրության հիման վրա: Մինչև 14 անդամ ունեցող խմբակցություններն ունենում են 1 գործավար և 3 փորձագետ, իսկ ավելի մեծերը՝ 1 գործավար և 4 փորձագետ: Մշտական հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունի մեկ համակարգող փորձագետ և առնվազն երկու փորձագետ (մասնագետ):

Հաշվի առնելով ԱԺ կողմից յուրաքանչյուր տարի ընդունվող օրենքների մեծ քանակը (յուրաքանչյուր տարի ընդունվում է մոտավորապես 15-20 օրենք և փոփոխություն և/կամ լրացում է կատարվում 150-250 գործող օրենքներում) և ոլորտային բազմազանությունը, ԱԺ 40-45 փորձագետները չեն կարող բավարար մասնագիտական որակավորում ունենալ ԱԺ քննարկմանը ներկայացվող ամենատարբեր ոլորտների բոլոր հարցերի վերաբերյալ[2]: ԱԺ հանձնաժողովները և խմբակցությունները պետք է հնարավորություն ունենան ձեռք բերել խորհրդատվական ծառայություններ:

[1] «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք (ՀՕ-9-Ն, 2016թ. դեկտեմբերի 16): «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-158-Ն, 2009թ. հունիսի 11):

[2] «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն (ՀՕ-180-Ն, 2018թ. մարտի 21) կարող է իրականացվել նորմատիվ իրավական ակտի կարգավորման ազդեցության գնահատում:

3. Այլընտրանքային խորհրդատվական կարծիքի անհրաժեշտությունը

Ամեն տարի ԱԺ-ն մեծ թվով օրենսգրքեր և օրենքներ է ընդունում[3]:

Կատարված աշխատանքը	քանակը
Նոր օրենսգրքերի և օրենքների ընդունում	15
Փոփոխություններ և լրացումներ[4] գործող օրենսգրքերում և օրենքներում	260
Չեղարկված կամ ուժը կորցրած ճանաչված փաստաթղթեր	2
Վավերացված փաստաթղթեր	38
ԸՆԴԱՄԵՆԸ	**315**

Աղբյուր. www.arlis.am

Եթե ենթադրենք, որ մինչև 14 անդամ[5] սովորաբար ունենում են ընդիմադիր խմբակցությունները, որոնք պետք է հավաստիանան կառավարության և իշխող ուժի պատգամավորների կողմից ներկայացված օրենքների հիմնավորումների հավաստիության հարցում և վիճարկեն իրենց կարծիքով չհիմնավորված օրենքները, ապա նման քանակով փաստաթղթերի փորձաքննություն երեք փորձագետի կողմից, որոնք կարող են մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունենալ միայն մի քանի բնագավառներում, անիրատեսական է: ԱԺ բոլոր, սակայն հատկապես ընդիմադիր խմբակցությունների համար, կարևոր է անկողմնակալ մասնագիտական խորհրդատվություն ստանալ անկախ խորհրդատուների կողմից: Անկախ խորհրդատուների կողմից օրենքների նախագծերի և ԱԺ կողմից վավերացվող այլ փաստաթղթերի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ է միջոցներ նախատեսել ՀՀ պետական բյուջեով ԱԺ-ին նախատեսվող ֆինանսական ծավալներում:

4. Խորհրդատվություն պահանջող հարցերի շրջանակը

ՀՀ Սահմանադրության հոդված 88-ի համաձայն ԱԺ-ն ներկայացուցչական մարմին է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ և ընդունում է պետական բյուջեն: Հոդված 106-ի համաձայն ԱԺ-ն ստեղծում է մշտական հանձնաժողովներ, որոնք իրականացնում են օրենքների նախագծերի և իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկում և ԱԺ-ին դրանց վերաբերյալ եզրակացությունների ներկայացում: ԱԺ որոշումների, հայտարա-րությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ ԱԺ

[3] Վերջին տասնամյակում ԱԺ-ն յուրաքանչյուր տարի մոտավորապես 200-300 օրենք է ընդունում:

[4] Այդ թվում փոփոխություն կամ փոփոխություններ, լրացում կամ լրացումներ, փոփոխություն և լրացումներ, լրացում և փոփոխություններ, լրացումներ և փոփոխություններ:

[5] «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի (ՀՕ-9-Ն, 2016թ. դեկտեմբերի 16) հոդված 161-ի մաս 3:

եզրակացություններ ներկայացնելու համար ԱԺ որոշմամբ կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ (Հոդված 107):

ԱԺ մշտական և ժամանակավոր հանձնաժողովները և խմբակցությունները խորհրդատվական ծառայությունների կարիք կարող են ունենալ.

1) ՀՀ կառավարության, ԱԺ խմբակցությունների և պատգամավորների կողմից ներկայացված օրենքների նախագծերի և հասարակական, քաղաքական, տնտեսական և այլ հարաբերությունների վրա դրանց հնարավոր ազդեցությունը գնահատելու համար:

2) ԱԺ կողմից վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի վերաբերյալ:

3) Վերպետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության, ինչպես նաև ՀՀ տարածքի փոփոխության վերաբերյալ հարցերի շուրջ:

4) ԱԺ որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի վերաբերյալ:

5) Նստաշրջանի՝ շաբաթվա ընթացքում գումարվող նիստերից մեկում պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով անցկացվող հասարակական հետաքրքրություն ներկայացվող հրատապ քննարկվող թեմայի վերաբերյալ:

6) Կառավարության կողմից ռազմական դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով գումարված ԱԺ նիստի ժամանակ քննարկվող, ռազմական դրությունը վերացնելու կամ չեղյալ հայտարարելու առաջարկության վերաբերյալ:

7) Կառավարության կողմից արտակարգ դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով գումարված ԱԺ նիստի ժամանակ քննարկվող, արտակարգ դրությունը վերացնելու կամ չեղյալ հայտարարելու առաջարկության վերաբերյալ:

8) Օրենքների կիրարկման, արդյունքների, ազդեցությունների և հետևանքների վերաբերյալ:

9) ԱԺ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի կիրարկման, դրանց արդյուքնենրի, ազդեցությունների և հետևանքների, վերպետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության, ինչպես նաև ՀՀ տարածքի փոփոխության արդյունքների, ազդեցությունների և հետևանքների վերաբերյալ:

ԱԺ կողմից օրենքների նախագծերի, վավերացման ենթական միջազգային համաձայնագրերի, վերպետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության, ՀՀ տարածքի փոփոխության, օրենքների և միջազգային պայմանագրերի կիրարկման, վերպետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության և ՀՀ տարածքի փոփոխության արդյունքների, ազդեցությունների և հետևանքների վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելուց առաջ ԱԺ աշխատակազմը այդ աշխատանքը հանձնարարում է ԱԺ աշխատակազմի համապատասխան աշխատակցին, եթե այդպիսի հմտություններով աշխատակից ԱԺ աշխատակազմում առկա է:

Եթե ԱԺ հանձնաժողովների և/կամ խմբակցությունների անդամները գոհ չեն ԱԺ աշխատակազմի աշխատակցի կողմից մատուցված ծառայությունների որակից, ԱԺ աշխատակազմը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան խորհրդատվական ծառայություններ[6] ձեռք բերելու նպատակով խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու վերաբերյալ մրցույթ է հայտարարում:

Խորհրդատվական ծառայությունների անհրաժեշտություն կարող է առաջանալ, եթե ՀՀ ԱԺ հանձնաժողովները և խմբակցությունները կարծում են, որ.

1) ԱԺ քննարկմանը ներկայացված օրենքի նախագծի, www.e-draft.am կայքում քննարկման ժամանակ շահառուների կողմից ներկայացվել են առաջարկություններ, որոնք մերժվել են կառավարության կողմից, սակայն մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, խմբակցության կամ պատգամավորի կարծիքով պարունակում են հիմնավորումներ, որոնք արժանի են ուշադրության և անհրաժեշտ է դրանք դիտարկել հանձնաժողովներում և լիագումար նիստերի ժամանակ օրենքը քննարկելիս:

2) Մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, խմբակցության կամ պատգամավորի կարծիքով ԱԺ ներկայացված օրենքների նախագծերը, միջազգային պայմանագրերը, վերպետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության, ինչպես նաև ՀՀ տարածքի փոփոխության վերաբերյալ հարցերի, ԱԺ որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի վերաբերյալ դիրքորոշում ձևավորելու համար անհրաժեշտ է մասնագիտական կարծիք:

3) Մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, խմբակցության կամ պատգամավորի կարծիքով ԱԺ կողմից ընդունված օրենքների հետ-օրենսդրական վերահսկողության[7], ԱԺ որոշումների, հայտարարությունների և ուղերձների, կամ պատգամավորական էթիկային առնչվող հարցերի հետ կապված դրանց կիրարկման կամ կատարման ստուգման անհրաժեշտություն է առաջացել:

ԱԺ համաձայն մշտական հանձնաժողովները խորհրդարանական վերահսկողություն են իրականացնում օրենքների կատարման ընթացքի նկատմամբ[8]: Հանձնաժողովների խորհրդարանական վերահսկողության շրջանակները սահմանվում են խմբակցությունների կողմից ԱԺ առաջին նստաշրջանում մշտական հանձնաժողովների ստեղծման մասին ԱԺ խմբակցությունների կողմից ներկայացված որոշման նախագծերի հիման վրա:

---

[6] «Գնումների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-21-Ն, 2016թ. դեկտեմբերի 16) համաձայն խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունքում ստեղծվում են ոչ նյութական՝ ֆիզիկական էությունից զուրկ արժեքներ:

[7] Այդ թվում, ՀՀ կողմից ստորագրված միջազգային պայմանագրերի, օրինակ՝ ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերային համաձայնագրից բխող պարտավորությունների, վերպետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության, օրինակ՝ Եվրասիական տնտեսական միության անդամությունից բխող պարտավորությունների վերաբերյալ:

[8] «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի (ՀՕ-9-Ն, ընդունվել է 2016թ. դեկտեմբերի 16-ին) հոդված 122:

Հետ-օրենսդրական վերահսկողության շրջանակներում ԱԺ հանձնաժողովը կամ խմբակցությունը ցանկանում է գնահատել ԱԺ կողմից ընդունված օրենքի կիրառման արդյունավետություն, թե որքանով է օրենքը օժանդակում դրանով սահմանված նպատակներին հասնելուն, ինչ խոչընդոտներ կան օրենքի կիրարկման ժամանակ, օրենքի կիրարկման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ: Հետ-օրենսդրական վերահսկողության նպատակով խորհրդատվական ծառայություններ ստանալու համար, ԱԺ աշխատակազմը պարտավոր է ընտրված խորհրդատուին տրամադրել օրենքի նախագծի հետ ներկայացված բոլոր փաստաթղթերի պատճենները:

Մշտական և ժամանակավոր հանձնաժողովներն և խմբակցությունները կարող են մասնագիտական կարծիքի կարիք ունենալ[9] միջազգային պայմանագրերի և վերպետական միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության մասին:

ԱԺ-ն կարող է կազմակերպություններից և անհատ մասնագետներից խորհրդատվություն ստանալ պատվիրակման միջոցով: ՀՀ ԱԺ հանձնաժողովներին և խմբակցություններին տրամադրված խորհրդատվությունը համարվում է ՀՀ ԱԺ-ին տրամադրված խորհրդատվություն:

5. ԱԺ-ին խորհրդատվություն տրամադրողների հնարավոր շրջանակը

ՀՀ ԱԺ-ին խորհրդատվական կարծիք կարող են տրամադրել.

1) Գիտական կենտրոնները
2) Համալսարանները
3) Հասարակական կազմակերպությունները
4) Անհատները

ՀՀ ԱԺ-ին խորհրդատվական կարծիք տրամադրել չեն կարող այն կազմակերպությունները և անձինք, որոնք ՀՀ կառավարությանը և առանձին պետական մարմինների խորհրադատվություն են տրամադրել տվյալ օրենքի նախագծի մշակման ժամանակ և/կամ մասնակցել են օրենքի նախագծի մշակմանը:

Օրենքների նախագծերի վերաբերյալ ԱԺ-ին տրամադրված խորհրդատվությունը նվազագույնը պետք է պարունակի խորհրդատվական կարծիք.

1) Այլ օրենքների վրա տվյալ նախագծի ընդունման ազդեցության գնահատական:
2) Օրենքի շահառուների շրջանակի գնահատականը, այդ շահառուների առանձին խմբերի բնութագրերը և քանակները:

[9] Օրինակ այն մասին, թե ինչպես են վերը նշված պայմանագրերը և միջազգային և վերպետական կազմակերպություններին անդամակցությունը ազդել ՀՀ տնտեսության և դրա առանձին ճյուղերի, բնակչության և դրա առանձին խմբերի կենսամակարդակի, գործարար միջավայրի, սոցիալական, դեմոգրաֆիական, բնապահպանական և այլ հարաբերությունների վրա:

3) Օրենքի կիրարկման համար անհրաժեշտ ռեսուրսների գնահատականը և այդ ռեսուրսները ձեռք բերելու համար անհրաժեշտ միջոցների առկայությունը ՀՀ պետական բյուջեում:

Հանձնաժողովների և խմբակցությունների կողմից հիմնավորման դեպքում խորհրդատուին ներկայացվող պահանջներում և տեխնիկական առաջադրանքում կարող են ներառվել օրենքների նախագծերի վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների ներկայացվող այլ պահանջներ:

Հետօրենսդրական վերահսկողության նպատակով տրամադրվող խորհրդատվությունը պետք է անդրադառնա.

1) Դատարանների կողմից օրենքի և դրա առանձին դրույթների մեկնաբանություններին և օրենքի նախագծի փաթեթի և ՀՀ ԱԺ-ում օրենքի նախագծի քննարկման ժամանակ ներկայացված հիմնավորումների հետ դրանց համապատասխանությանը:

2) Օրենքի այն դրույթներին, որոնց խախտման վերաբերյալ երկար ժամանակ հայցեր չեն ներկայացվել դատարաններ[10]:

Հանձնաժողովների և խմբակցությունների կողմից հիմնավորման դեպքում խորհրդատուին ներկայացվող պահանջներում և տեխնիկական առաջադրանքում կարող են ներառվել հետօրենսդրական վերահսկողության նպատակով տրամադվող խորհրդատվական ծառայություններին ներկայացվող այլ պահանջներ:

Եթե տրամադրված խորհրդատվական կարծիքը չի պարունակում պետական և/կամ ծառայողական գաղտնիք և չի վերաբերում պետական և/կամ ծառայողական գաղտնիքների, ապա ՀՀ ԱԺ հանձնաժողովների և խմբակցությունների կողմից ստացված խորհրդատվական կարծիքները ենթակա են պարտադիր հրապարակման ՀՀ ԱԺ ինտերնետային կայքում և կազմում են օրենքի նախագծի փաթեթի մաս:

6. Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ընթացակարգը

Խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու նպատակով ԱԺ աշխատակազմին կարող են դիմել մշտական և ժամանակավող հանձնաժողովների նախագահները և խմբակցությունների ղեկավարները: Խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար հանձնաժողովի նախագահը կամ խմբակցության ղեկավարը գրություն է ուղղում ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղարին, որում ներկայացնում է.

1) Պահանջվող աշխատանքի տեխնիկական առաջադրանքը: Տեխնիկական առաջադրանքը պետք է տեղեկատվություն պարունակի.

[10] Ինչը կարող է նշանակել, որ այդ դրույթները հավանաբար դեկլարատիվ բնույն են կրում

i. խորհրդատվության առկա հանդիսացող փաստաթղթի անվանումը,

ii. կոնկրետ հարցերի շրջանակը, որոնց պետք է անդրադառնա խորհրդատուն,

iii. խորհրդատուին ներկայացվող նվազագույն պահանջները:

2) Հիմնավորումը, թե ինչու հանձնաժողովի կամ խմբակցության փորձագետը չի կարող խորհրդատվություն տրամադրել հիշյալ հարցի վերաբերյալ, այդ թվում նշում է հանձնաժողովի կամ խմբակցության փորձագետի պաշտոնի անձնագրով նախատեսված մասնագիտացումները (օրինակ՝ կրթություն, առողջապահություն, պետական ֆինանսական կառավարում, շրջակա միջավայրի պաշտպանություն և այլ):

ՀՀ ԱԺ-ն խորհրդատվական ծառայություններ ստանալու նպատակով կազմակերպություն կամ անհատ մասնագետ ընտրում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգերի համաձայն: Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է բաց կամ փակ նպատակային մրցույթի ընթացակարգով[11], որի դեպքում նախկինում ԱԺ-ին խորհրդատվություն տրամադրած անձանց հայտը գնահատելիս հաշվի է առնվում նաև նրանց կողմից նախկինում տրամադրված խորհրդատվության վերաբերյալ ԱԺ պատգամավորների կարծիքը:

7. Խորհրդատվական ծառայությունների ֆինանսավորումը

Խորհրդատվական ծառայությունները ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, որում միջոցներ են նախատեսվում ԱԺ կողմից խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար:

ՀՀ պետական բյուջեով նախատեսվող ֆինանսական միջոցները (այսուհետ՝ ֆինանսական միջոցներ) հանձնաժողովների և խմբակցությունների միջև կարող են բաշխվել երեք սկզբունքների համաձայն.

1) Միասնական ֆոնդ, որը հանձնաժողովների և խմբակցությունների միջև բաշխվում է ԱԺ նախագահի որոշմամբ,

2) Հանձնաժողովների միջև հավասարաչափ, իսկ խմբակցությունների միջև հակադարձ համամասնությամբ,

[11] Խորհրդատվական ծառայությունների բաց կամ փակ նպատակային մրցույթի ընթացակարգով գնման դեպքում խորհրդատուների ցուցակ կազմելու նպատակով կազմակերպվում է նախաորակավորման ընթացակարգ: Նախաորակավորման ընթացակարգ կազմակերպելու դեպքում այդ մասին հրապարակվում է նախաորակավորման հայտարարություն: Երկու փուլով մրցույթի կամ փակ նպատակային մրցույթի կիրառման դեպքում նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն 15 օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման օրվանից:

Եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը՝ 70 միլիոն դրամ և 15 օրացուցային օրվա ժամկետի կիրառումը անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել, ապա նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման օրվանից:

Գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախաորակավորումն անցած մասնակիցները:

3) Հանձնաժողովների միջև միջոցները բաշխվում են համաձայն ՀՀ կառավարության գործունեության տարեկան ծրագրում նշված առաջնահերթությունների (քանի որ ենթադրվում է, որ առաջնահերթ ոլորտներում ավելի շատ օրենքների նախագծեր են մշակվելու և ներկայացվելու ԱԺ քննարկմանը):

Ֆինանսական միջոցների կեսը հատկացվում է ԱԺ հանձնաժողովներ կողմից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար: Հանձնաժողովների համար նախատեսված ֆինանսական միջոցները բաժանվում են հանձնաժողովների թվին գումարած մեկ մեծության վրա, որտեղ մեկ լրացուցիչ մասը նախատեսվում է տարվա ընթացքում ստեղծվելիք հնարավոր ժամանակավոր հանձնաժողովի համար:

Ֆինանսական միջոցների կեսը հատկացվում է ԱԺ խմբակցությունների կողմից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար: Խմբակցությունների համար նախատեսված միջոցները խնբակցությունների միջև բաշխվում են հակադարձ համամասնությամբ.

1) ԱԺ ամենամեծ խմբակցությունը, որպես կառավարություն ձևավորող քաղաքական ուժ, որը կարող է հենվել կառավարությունում առակ փորձառության վրա, իրավունք է ստանում օգտվել հանձնաժողովների համար նախատեսված ֆինանսական միջոցների ամենափոքր ծավալից, որը հավասար է ԱԺ-ում ներկայացված ամենափոքր խմբակցության պատգամավորների տեսակարար կշռին ԱԺ պատգամավորների ընդհանուր թվում:

2) ԱԺ ամենափոքր խմբակցությունը իրավունք է ստանում օգտվել հանձնաժողովների համար նախատեսված միջոցների ամենամեծ ծավալից: ԱԺ ամենափոքր խմբակցության համար նախատեսված միջոցները կազմում են ԱԺ-ի կողմից խորհրդատվական ծառայութների ձեռքբերման համար նախատեսված միջոցների այն տոկոսը, որը պատգամավորների ընդհանուր թվում կազմում են իշխող քաղաքական ուժի խմբակցության ներկայացուցիչները:

3) Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված մնացած ֆինանսական միջոցները ԱԺ մնացած խմբակցությունների միջև բաշխվում են վերը ներկայացված սկզբունքի համաձայն: Եթե ԱԺ-ում առկա է ևս երկու խմբակցություն, ապա մեծությամբ երկրորդ խմբակցությունը ստանում է մեծությամբ երրորդ խմբակցության տեսակարար կշռին հավասար ֆինանսական միջոցներ, իսկ մեծությամբ երրորդ խմբակցությունը՝ մեծությամբ երկրորդ խմբակցության տեսակարար կշռի մեծությանը հավասար ֆինանսական միջոցներ:

Հավելված N 2. Նոր նախաձեռնությունների ներկայացման ձևաչափ

1. Պետական մարմինը
1.1 Պետական մարմնի անվանումը՝ ՀՀ Ազգային ժողով 1.2 Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները՝ -
2. Ծրագիրը
2.1 Ծրագրի անվանումը՝ ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում 2.2 Ծրագրի կոդը՝ 1024 2.3 □ Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացատրություններ)՝
3. Միջոցառումը
3.1 Միջոցառման անվանումը՝ ԱԺ հանձնաժողովների և խմբակցությունների համար խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում 3.2 Միջոցառման կոդը՝ 3.3 Միջոցառման (պետության միջամտության տեսակը)՝ ☑ Ապրանք և ծառայություն ☐ Տրանսֆերտ ☐ Այլ (նկարագրություն) 3.4 ☑ Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացատրություններ)՝ ՀՀ ԱԺ հանձնաժողովներին և խմբակցություններին օրենքների նախագծերի և նախկինում ընդունված օրենքների ազդեցության վերաբերյալ խորհրդատվության տրամադրում ☐ Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացատրություններ)՝
4. Նպատակը
ՀՀ ԱԺ կողմից ընդունվող օրենսդրական ակտերի նախագծերի բարելավում և նախկինում ընդունված օրենքներում փոփոխությունների և լրացումների կատարման հիմնավորում, անհրաժեշտության դեպքում նախագծի պատրաստում
5. Նկարագրությունը
ՀՀ ԱԺ են ներկայացվում տարբեր ոլորտնում իրավահարաբերությունները կարգավորող և գործող օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքների նախագծեր: Առանձին, խիստ մասնագիտական ոլորտների հետ կապված քննարկումներին արդյունավետ և տեղեկացված մասնակցություն ունենալու համար ՀՀ ԱԺ հանձնաժողովները խմբակցություններն ու անհատ պատգամավորները ոլորտի և կոնկրետ հարցի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության կարիք ունեն: Այս միջոցառման շրջանակներում ՀՀ ԱԺ-ն հնարավորություն կունենա խորհուրդատվություն ստանալու նպատակով կարճաժամկետ հիմունքներով ներգրավել առանձին ոլորտների վերաբերյալ խորը գիտելիքներ ունեցող գիտական և

հետազոտական կենտրոններին, համալսարաններին, հասարակական կազմակերպություններին և անհատներին: Միջոցառման ուղղակի շահառուները լինեն ԱԺ հանձնաժողովները, խմբակցություններն ու պատգամավորները, իսկ անուղղակի շահառուները՝ ՀՀ քաղաքացիները և տնտեսվարողները: 2020-2022թթ.-ին միջոցառումը կներդրվի փորձնական կարգով: Հաշվի առնելով նախորդ տարիների փորձը, ենթադրվում է, որ յուրաքանչյուր տարի կընդունվի միջին հաշվով մոտավորապես 15 նոր օրենք և գործող օրենքներում կկատարվի 200-250 փոփոխություն և լրացում: Ակնկալվում է, որ խորհրդատվություն կպահանջվի ներկայացված բոլոր 15 նոր օրենքների հետ կապված քննարկումների համար այլընտրանքային աղբյուրներից խորհրդատվություն ստանալու համար: Խորհրդատվություն կարող է պահանջվել նաև փոփոխությունների ենթարկվող 200-250 օրենքների մի մասի վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս միջոցառումը նոր է և չկան օրենքներում կատարվող փոփոխությունների գծով խորհրդատվական ծառայությունների անհրաժեշտության վերաբերյալ պատմական տվյալներ, այս պահին կանխատեսվում է, որց նախագծերի 20 տոկոսի դեպքում ԱԺ հանձնաժողովները, խմբակցությունները և պատգամավորները նման խորհրդատվության կարիք կունենան: Այսինքն ԱԺ-ն մոտավորապես 65 խորհրդատվական ծառայության կարիք կունենա:

Նախկինում ընդունված օրենքների և հետօրենսդրական ուսումնասիրությունների նպատակով խորհրդատվական ծառայություններ ձեռք կբերվեն մի քանի սկզբունքներով.

1) Յուրաքանչյուր հանձնաժողովի հնարավորություն կտրվի ընտրել առնվազն մեկ օրենքի նախագիծ և մեկ ակտ հետօրենսդրական ուսումնասիրության ենթարկելու համար: Հաշվի առնելով ԱԺ-ում 9 մշտական հանձնաժողովի առկայությունը, կպահանջվի 18 խորհրդատվական ծառայություն:
2) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԺ կողմից քննարկվող օրենքների նախագծերի բացարձակ մեծամասնությունը սովորաբար ներկայացվում է ՀՀ կառավարության կողմից, խորհրդատվություն ձեռք բերելու համար կընտրվեն այն օրենքների նախագծերը, որոնք առաջնահերթ են ճանաչվել ՀՀ կառավարության գործունեության ծրագրում: Այս եղանակով, ԱԺ-ն խորհրդատվական ծառայություններ ձեռք կբերի 32 օրենքների նախագծերի վերաբերյալ:

Խորհրդատվական ծառայությունների գնի վերաբերյալ ԱԺ-ն պատմական տվյալներ նույնպես չունի: Սակայն ԱԺ-ն պարբերաբար խորհրդատվություն է ստացել միջազգային գործընկեր կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում: Միջազգային գործընկերների հետ շփումների հիման վրա մեկ խորհրդատվության միջին արժեքը գնահատվել է մեկ միլիոն դրամ: Խորհրդատվական ծառայությունները ձեռք են բերվելու մրցակցային եղանակով, ինչի արդյունքում, առանձին դեպքերում, գները կարող են տատանվել: Խորհրդատվական ծառայությունների գների վերաբերյալ կուտակված տեղեկատվությունը կօգնի բարելավել պլանավորումը փորձնական փուլից հետո:

6. Սպասվող օգուտները

Անկախ կառույցից կամ մասնագետից ստացված խորհրդատվակություն ՀՀ ԱԺ պատգամավորներին կօգնի ավելի շատ տեղեկատվություն ունենալ օրենքների նախագծերի քննարկման ժամանակ, ինչը կբարելավի քննարկումների որակը, կապահովի կարծիքների բազմազանություն և հնարավորություն կտա կրճատել հետագա փոփոխությունների անհրաժեշտությունը: Խորհրդատվական ծառայությունները կօգնեն բացահայտել նախկինում ընդունված օրենքների իրավակիրառական պրակտիկայում առկա թերությունները և հանդես գալ օրենքներում փոփոխությունների և լրացումների վեարբերյալ առաջարկություններով և նախաձեռնություններով:

7. Միջոցառումը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները					
Միջոցառումը չիրականացնելու դեպքում ՀՀ ԱԺ ստիպված կլինի շարունակել օրենքներում հաճախակի և պարբերաբար փոփոխությունների կատարելու պրակտիկան, քանի որ օրենքները կընդունվեն առանց քննարկումների համար անհրաժեշտ հավելյալ տեղեկատվության տիրապետելու և ոչ բավարար քննադատական քննարկումների					
8.Արդյունքային ցուցանիշները	Չափի միավորը	Բյուջետավորվող տարի	Բյուջետավորվող տարի +1	Բյուջետավորվող տարի +2	*Միջոցառման ավարտի տարեթիվը*
Վերլուծված օրենքների նախագծերի քանակը	հաշվետվություն	65	70	75	
.....					
Արդյունքային ցուցանիշի միավորի գծով ծախսերը	ՀՀ դրամ	X	X	X	X
1 000 000 դրամ	X	65 000 000	70 000 000	75 000 000	
....	X				
9. Պահանջվող ռեսուրսները	ՀՀ դրամ	Բյուջետավորվող տարի	Բյուջետավորվող տարի +1	Բյուջետավորվող տարի +2	*Միջոցառման ավարտի տարեթիվը*
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	X	65 000 000	70 000 000	75 000 000	
....	X				
Ընդամենը	X				
10. Ֆինանսավորման աղբյուրը	ՀՀ դրամ	Բյուջետավորվող տարի	Բյուջետավորվող տարի +1	Բյուջետավորվող տարի +2	*Միջոցառման ավարտի տարեթիվը*
Պետական բյուջե	X	65 000 000	70 000 000	75 000 000	
Այլ աղբյուրներ	X	X	X	X	X
	X				
...	X				
Ընդամենը պետական բյուջեի և այլ աղբյուրների գծով	X				
11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլընտրանքներ					
Այլընտրանք # 2 (նվազագույն արդյունքների սցենար) Նոր օրենքների նախագծերի վերլուծություն (15 մլն դրամ տարեկան): Այս դեպքում ԱԺ պատգամավորները հնարավորություն կունենան խորհրդատուներ ներգրավել միայն նոր օրենքների նախագծերի վերլուծության նպատակով:					
12. Միջոցառման իրականացման այլ եղանակներ արտահայտող այլընտրանքներ					
Այլընտրանք # 3 Խորհրդատվական ծառայություններ ձեռք կբերվեն օրենքների նախագծերի փաթեթներ ուսումնասիրելու նպատակով, որոնց շրջանակներում համակարգված կերպով կուսումնասիրվեն օրենգների նախագծերի խմբեր (օրինակ՝ առանձին ոլորտների օրենքների նախագծեր):					

Այլընտրանք # ....
13.Այլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ
Միջազգային գործընկերների հետ համաձայնությունների դեպքում ի լրումն վերը նշված խորհրդատվությունների ԱԺ պատգամավորները խորհրդատվություն կստանան նաև միջազգային գործընկերների կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Հավելված N 6. Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման աղբյուրները (ամփոփ)

(հազար դրամներով)

		2019թ.	2020թ.	2021թ.
1	Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	40 000	45 000	50 000
2	Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման այլ աղբյուրներ (տող 2.1 + տող 2.2.)	-	-	-
2.1	Այլ աղբյուրներից ակնկալվող ֆինանսավորում	-	-	-
2.2	Այլ ծրագրերից ակնկալվող ծախսային խնայողություններ	-	-	-
3	Նոր նախաձեռնությունների զուտ ազդեցությունը պետական բյուջեի վրա (ընդհանուր ծախս՝ հանած եկամտի այլընտրանքային աղբյուրներ և/կամ այլ ծրագրերից խնայողություններ) (տող 1 – տող 2)	40 000	45 000	50 000